154

1. Դու ինձ մոտ ես, քան ծովին իր ափը,
Դու ինձ թանկ ես, քան մայրն՝ իր որդուն,
Դու եկար, որ քաղցրացնես իմ դառը,
Դու եկար, որ տանես ինձ Աստծուն:

Առանց Քեզ իմ կյանքն էլ ինձ պետք չէ,
Առանց Քեզ միայն մեղք եմ գործում,
Դու ես միայն ուրախությունն իմ հոգու,
Եղի՛ր միշտ ինձ հետ, Քեզ եմ խնդրում:

2. Երբ Աստված այցելում է աշխարհին,
Որ նրա ձեռքից ազատի ինձ,
Այնժամ Քեզ եմ տեսնում միշտ իմ առջևում,
Եվ իմ հոգին փարվում է Քեզ:

3. Եվ հիմա Քո հավատքով կենդանի
Ապրում եմ ես այս երկրի վրա,
Դու ինձ մոտ ես, քան ավազը՝ ծովափին
Եվ թանկ ես, քան ջուրը՝ այրվողին:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025